ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

31 հունվարի 2023 թ. **N 3-Ա**
ք. Երևան

ՈՐՈՇՈՒՄ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ) ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱՀԱՇԻՎ ՍՏԱՆԱԼՈՒ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՕԳՏԱՀԱՇԻՎ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎԱԹՂԹԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8.1-րդ հոդվածի 2-րդ մասով, 51-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով, 84-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին և երկրորդ պարբերություններով, 130-րդ հոդվածի 4.1-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի ձևավորման նպատակով օգտահաշիվ ստանալու և էլեկտրոնային եղանակով ընտրական ցուցակ ձևավորելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել օգտահաշիվ ստանալու նպատակով ներկայացվող դիմումի էլեկտրոնային ձևաթղթի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

(Փոփ. 24.02.26 N 20-Ա)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ.Հովակիմյան**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2023թ. հունվարի 31-ի N 3-Ա որոշման

ԿԱՐԳ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ) ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱՀԱՇԻՎ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի ձևավորման նպատակով օգտահաշիվ ստանալու և կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակն էլեկտրոնային եղանակով ձևավորելու կարգը:

2. Ընտրություններին մասնակցելու համար կուսակցությունը, կուսակցությունների դաշինքն օգտահաշիվ ստանալու վերաբերյալ դիմումը (այսուհետ՝ Դիմում) Կենտրոնական ընտրական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացնում էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի (e-request.am, այսուհետ նաև՝ էլեկտրոնային հարթակ) միջոցով՝ ընտրությունների ժամանակացույցը Հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո, բայց ոչ ուշ, քան «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) գրանցման համար փաստաթղթերը համապատասխան ընտրական հանձնաժողով ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետը:

3. Էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացված դիմումը պետք է ներկայացվի «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Առանց էլեկտրոնային թվային ստորագրության ներկայացված դիմումները համարվում են անստորագիր և չեն քննարկվում:

4. Եթե դիմումը ստորագրված չէ այն անձի կողմից, որն իրավասու է առանց լիազորագրի ներկայացնել կուսակցությանը, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

5. Որևէ այլ եղանակով ներկայացված դիմումները չեն համարվում Ընտրական օրենսգրքի և սույն կարգով սահմանված էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումներ և չեն քննարկվում:

6. Դիմումի էլեկտրոնային ձևաթուղթը ներբեռնվում է Հանձնաժողովի համացանցային կայքից, որում նշվում է կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանումը (կուսակցությունների դաշինքի դեպքում՝ կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների անվանումները), ընտրության (ընտրությունների) անվանումը (անվանումները), իսկ տեղական ինքնակառավարման մարմինների

ընտրությունների դեպքում՝ նաև մարզը և համայնքը, օգտահաշիվ ստանալու համար պատասխանատուի անունը, ազգանունը, հայրանունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, որին օգտահաշիվը պետք է ուղարկվի:

7. Էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացված դիմումի տրման ամսաթիվը և ժամն ամրագրվում է ինքնաշխատ եղանակով:

8. Կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) տրամադրված օգտահաշիվը թույլ է տալիս իրականացնելու հետևյալ գործողությունները.

1) Էլեկտրոնային եղանակով ձևավորելու կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակը, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ նաև կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների ընտրական ցուցակները,
2) փոփոխություններ կատարել կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներում,
3) ներբեռնել և տպել կուսակցության (կուսակցությունների դաշինքի), կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների ընտրական ցուցակները,
4) ներկայացնել արտաքին գովազդային վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու հայտը,
5) կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակը գրանցելուց հետո ներկայացնել կուսակցության, կուսակցության դաշինքում ընդգրկված կուսակցությունների, ինչպես նաև ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերը:

9. Օգտահաշիվ ստանալուց հետո կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) Հանձնաժողովի պաշտոնական կայքի «Ընտրական ցուցակների առցանց մուտքագրման համակարգ»-ի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով ներմուծում է ընտրական ցուցակում ընդգրկվող անձանց տվյալները՝ ձևավորելով կուսակցության, կուսակցությունների դաշինքի (այդ թվում՝ դաշինքում ընդգրկված կուսակցությունների) ընտրական ցուցակի (ցուցակների) էլեկտրոնային տարբերակը (այսուհետ՝ էլեկտրոնային ընտրական ցուցակ):

10. Համակարգի միջոցով ձևավորված էլեկտրոնային ընտրական ցուցակը պետք է համապատասխանի Ընտրական օրենսգրքով ընտրական ցուցակներին ներկայացվող պահանջներին:

11. Կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) ընտրական ցուցակը ձևավորելուց հետո այն ներբեռնում է Մայքրոսոֆթ Էքզել (Microsoft Excel) ձևաչափով և թղթային եղանակով ևս ներկայացնում է գրանցումն իրականացնող ընտրական հանձնաժողով:

12. Կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) պատասխանատու է էլեկտրոնային ընտրական ցուցակի (ցուցակների) և թղթային եղանակով համապատասխան ընտրական հանձնաժողով ներկայացված ընտրական ցուցակի (ցուցակների) նույնականության համար:

13. Էլեկտրոնային ընտրական ցուցակի (ցուցակների) և թղթային եղանակով ներկայացված ընտրական ցուցակի (ցուցակների) միջև տարբերություններ հայտնաբերվելու դեպքում՝ հիմք է ընդունվում էլեկտրոնային ընտրական ցուցակը (ցուցակները):

14. Ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) էլեկտրոնային ընտրական ցուցակները հրապարակվում են Հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետում:

15. Ընտրական օրենսգրքով կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) գրանցման համար փաստաթղթերը համապատասխան ընտրական հանձնաժողով ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետի օրը՝ մինչև 18.00-ն, էլեկտրոնային ընտրական ցուցակի հետ գործողություններ կատարելու հնարավորությունը կասեցվում է:

16. Օգտահաշիվները գործում են միայն մինչև համապատասխան ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումը:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2023 թ. հունվարի 31-ի N 3-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովին

Դիմում

[Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը] կուսակցությունը, կուսակցության դաշինքը, որում ընդգրկված են _____

նշվում են կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների անվանումները

դիմում է _____

նշվում է ընտրության անվանումը, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընրությունների դեպքում՝ նաև մարզը և համայնքը

20_ թվականի _____ «____»-ի ընտրություններին մասնակցելու համար ընտրական ցուցակն առնցանց ձևավորելու և ներկայացնելու նպատակով կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) «Ընտրական ցուցակների առցանց մուտքագրման համակարգ» մուտք գործելու տվյալներ (օգտահաշիվ)՝ օգտվողի անուն և ծածկագիր տրամադրելու համար:

Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անգլերեն անվանումն է՝
_____

հապավումը (15 սիմվոլ) հայերեն՝ _____ անգլերեն _____

Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) պատասխանատուն է.
_____

նշվում է պատասխանատուի ազգանունը, անունը, հայրանունը

հեռախոս՝ +374 (__ _____)

էլ. փոստ՝ _____@_____

_____

Կուսակցության (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների)

ղեկավարի (ղեկավարների) անունը, ազգանունը, ստորագրությունը

Կ.Տ.

[դիմումը ներկայացնելու օր, ամիս, տարեթիվ]